



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք,

ՀՀ Լոռու մարզ , ք. Թումանյան, Կենտրոնական փ.,
շ.1, Հեռ. (098)048046 , tumanyan.lori@mta.gov.am

N 80
25 մայիս 2016թ.

**ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Նալբանդյան

Կից ներկայացնում ենք Թումանյան համայնքի ավագանու 2016թվականի մայիսի 19-ի թիվ
35-36-Ա,37-Ն,38-42-Ա որոշումները:

Առդիր՝ 32 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Կապ. Աշխարակազմի քարտուղար՝ Ռ. Շահվերդյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
19 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 35-Ա

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Թումանյան համայնքի ավագանու 2016 թվականի մայիսի 19-ի նիստի օրակարգը.

1. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016Թ. ՄԱՅԻՍԻ 19-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆՏԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ
3. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ
4. ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻՆ ԿԻՑ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄՆՆԵՐԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
5. «ՀԱՅ ԶՐՄՈՒԴԿՈՅՈՒԴԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԶԵՆՔԲԵՐՎԱԾ ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ, 14-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆԿՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ԱԿՏՈՍԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ԳԱՆՉԿՈՂ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻՑ ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ԱԶՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. ՀՈՂԱՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ
2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՌ
3. ԽԵԶՈՅԱՆ ՄԵՐՈՒԺԱՆ
4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ
5. ՄՆԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ
6. ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ
7. ԿԻՐԱՔՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԶԱԿԱՐՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
 ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 19 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 36-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՏՈՒՑԻՉՆԵՐԻ ՆՏԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի 6-րդ մասով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնքի կազմում ընդգրկված վարչական մերկայացուցիչների նստավայրերը՝ համաձայն ցուցակի.

h/h	Բնակավայրը	Հասցեն
1	Աթան	Բնակավայր Աթան, 1-ին փող., թիվ 1
2	Ահնիծոր	Բնակավայր Ահնիծոր, 2-րդ փող., թիվ 2
3	Լորուտ	Բնակավայր Լորուտ փող., 1-ին փող., թիվ 6
4	Մարց	Բնակավայր Մարց, 2-րդ փող., թիվ 1
5	Շամուտ	Բնակավայր Շամուտ, 11-րդ փող. թիվ 1
6	Ջարինջ	Բնակավայր Ջարինջ, Միտյա Մկրտումյանի փող., թիվ 46

Կողմ -7

Ղեմ -0

Չեղմպահ - 0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

2. ԳԱՍՏՅԱՆ ԳՈՐ

3. ԽԵՉՈՅԱՆ ՄԵՐՈՒԹԱՆ

4. ՄԵԼԻՋՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄՍԻԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

6. ՇԱԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ԿԻՐԱԲՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՐՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (098)048046, tumanyan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19 ՄԱՅԻՍԻ 2016թվականի N 37-Ն

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի առաջին մասի 2-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով՝ Թումանյան համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Թումանյան համայնքի 2016-2020 թվականների զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Թումանյան համայնքի ավագանու 2012թ. սեպտեմբերի 27-ի «Թումանյան համայնքի 2013-2016թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 28-Ն որոշումը, Լորուտ համայնքի ավագանու 2013թ. օգոստոսի 5-ի «Լորուտ համայնքի 2013-2016թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 15-Ն որոշումը, Աթան համայնքի ավագանու 2014թ. հուլիսի 2-ի «Աթան համայնքի 2014-2017թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 9-Ն որոշումը, Ահնիձոր համայնքի ավագանու 2012թ. դեկտեմբերի 23-ի «Ահնիձոր համայնքի 2012-2015թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 18-Ն որոշումը, Քարինջ համայնքի ավագանու 2014թ. մայիսի 29-ի «Քարինջ համայնքի 2014-2017թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 12-Ն որոշումը, Մարց համայնքի ավագանու 2014թ. հուլիսի 28-ի «Մարց համայնքի 2013-2016թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 15-Ն որոշումը և Շամուտ համայնքի ավագանու 2013թ. հուլիսի 13-ի «Շամուտ համայնքի 2013-2016թվականների քառամյա զարգացման ծրագրի հաստատման մասին» թիվ 18-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՅԴԻՆՅԱՆ ՍԵՅՐԱՆ

2. ԳԱԼՍՏՅԱՆ ԳՈՐ

3. ԽԵՉՈՅԱՆ ՍԵՐՈՒԺԱՆ

4. ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ԳԱԳԻԿ

5. ՄԻԿԹԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ

6. ՇԱՀԿԵՐԴՅԱՆ ՍԵՅՐԱՆ

7. ՎԻՐԱՔՅԱՆ ԳԱՅԱՆԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԼԵԿՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՐՈՒ ՄԱՐԶ

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2016-2020 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար ԼԵՎՈՆ ԶԱՎԱՐՅԱՆ

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 19.05.2016 թ. թիվ 37-Ն որոշմամբ

Ք.ԹՈՒՄԱՆՅԱՆ 2016թ.

Ոլորտային կապիտալ ծրագիր - 1

ՄԻՋՔՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԾԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

(Ծրագրի անվանումը)

Թումանյանի համայնքապետարան

(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատու ստորաբաժանումը)

Գումարը 65000000 դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում Նորը Այլ

Ծրագրի հիմնավորումը : Միջբնակավայրերի ճանապարհների երկարությունը կազմում է 28կմ:2013թ. կառավարության

կողմից հատկացված միջոցներով կատարվել է հողային և խճապատ աշխատանքներ:Բայց ջրահեռացման համակարգ չլինելու պատճառով հորդառատ անձրևների հետևանքով ճանապարհը դարձել է դժվար անցանելի:

Ծրագրի նպատակը (նպատակները): Միջբնակավայրերի ճանապարհները դարձնել բարեկարգ, անցանելի և հարմարավետ բնակչության տրանսպորտային միջոցների երթևեկության համար տարվա բոլոր եղանակներին:

Ծրագրի խնդիրները:

1. Միջբնակավայրերի ճանապարհների 28կմ-ոց հատվածի վերանորոգման աշխատանքները նախատեսել 2016թ. ընթացքում
2. Ձեռք կբերվի բազմաֆունկցիոնալ տրակտոր JCB3CX- 45000,0հազ.դրամ., ինքնաթափ մեքենա 12000.0հազ.դրամ

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշվային փաստաթղթերի պատրաստում							x	X				
2.	Գնումների կազմակերպում և տեխնիկայի ձեռք բերում								x	x			
3.	Աշխատանքների իրականացում									x	x	x	
4.	Ծրագրի արդյունավետության գնահատում. հաշվետվության կազմում և հրապարակում											x	x

Ծրագրի ակնկալվող արդյունքները

1. Միջբնակավայրերի ճանապարհների 28կմ-ոց հատվածը կլինի վերանորոգված և բարեկարգված:
2. Ճանապարհը կդառնա անցանելի տրանսպորտային միջոցների համար տարվա բոլոր եղանակներին:
3. Միջբնակավայրային կապը կբարելավվի:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	ԱՄՆԱՅԱՅԱ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)	65000.0				
Ա.	ԸՆԹԱՏԻՎ ԾԱԽՍԵՐ	65000.0				
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում					
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում					
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աձեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇՏԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանակալիության ռազմավարական պաշար					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՁՐԱՐԺԷ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	ԸՆԴԱՄԵՆԸ
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵՎԱՄՈՒՏՆԵՐ	65000,0				
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ	6500,0				
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ Այլ պետությունների ՏԻՄ-երից Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ Պետական բյուջեից նպատակային հատկացումներ ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ, դոնոր կազմակերպություններ	58500.0				

Հ/հ	Ծրագրի ազդեցությունը վարչական բյուջեի վրա	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	ԸՆԴԱՄԵՆԸ
1.	Վարչական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
2.	Վարչական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
	Հաշվեկշիռ (եկամուտներ – ծախսեր)	-	-	-	-	-

Ոլորտային կապիտալ ծրագիր - 2

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՐԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴԱՅՆՈՒՄ և ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

(Ծրագրի անվանումը)

Թումանյանի համայնքապետարան

(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատու ստորաբաժանումը)

Գումարը 58000000 դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում
 Սպասարկում
 Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում
 Վերականգնում
 Ընդլայնում
 Փոխարինում
 Նորը
 Այլ

Ծրագրի հիմնավորումը : Թումանյան համայնքում աղբահանության կազմակերպում: Համայնքի գյուղական բնակավայրերում ընդհանրապես չի իրականացվել աղբահանություն: Փողոցներին կից հարող տարածքներում աղբի կուտակումների հետևանքով առաջացել է վտանգ համաճարակների տարածման , ճանապարհները դարձել են անանցանելի:

Ծրագրի նպատակը (նպատակները): Ձեռք բերել աղբահանության համար անհրաժեշտ տեխնիկա, համայնքը մաքրել աղբից, տեղադրել աղբամաններ և համայնքը դարձնել գրավիչ զբոսաշրջիկների համար:

Ծրագրի խնդիրները:

1. Ձեռք կբերվի 80 հատ աղբարկղ
2. Ձեռք կբերվի աղբատար մեքենա
3. Ձեռք կբերվի տրակտոր T170
4. Կկառուցվի ժամանակակից աղբավայր

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախահաշիվների կազմում								x				
2.	Գնումների գործընթացի կազմակերպում									x	x		
3.	Աշխատանքների իրականացում										x	x	
4.	Ծրագրի արդյունավետության գնահատում. հաշվետվության կազմում եւ հրապարակում												x

Ծրագրի ակնկալվող արդյունքները

1. Համայնքը ունի գեղատեսիլ բնություն, այն կմաքրվի աղբից և կդառնա գրավիչ բազմաթիվ հյուրերի և տուրիստների համար:
2. Համայնքում կնվազի համաճարագային հիվանդությունների տարածման ռիսկերը:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴՈՒՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ)		58000,0			58000,0
Ա.	ԸՆԹԱՑԻՎ ԾԱՆՍԵՐ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում		28800,0			28800,0
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում					
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ		22800,0			22800,0
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ		6400,0			6400,0
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աձեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇՏՈՐՆԵՐ					
	-Համայնքային նշանակալիության ռազմավարական պաշար					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՉՐԱՐԹԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴՈՒՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		58000,0			58000,0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ					
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Այլ պետությունների ՏԻՄ-երից					
	Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ					
	Պետական բյուջեից նպատակային հատկացումներ					
	ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ, դոնոր կազմակերպություններ		58000,0			58000,0

Հ/հ	Ծրագրի ազդեցությունը վարչական բյուջեի վրա	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
1.	Վարչական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
2.	Վարչական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
	Հաշվեկշիռ (եկամուտներ – ծախսեր)	-	-	-	-	-

Ոլորտային կապիտալ ծրագիր - 3

Ներհամայնքային կապի բարելավում

(Ծրագրի անվանումը)

Թումանյանի համայնքապետարան

(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատու ստորաբաժանումը)

Գումարը 18000000 դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Շառայությունների մատուցում
 Սպասարկում
 Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում
 Վերականգնում
 Ընդլայնում
 Փոխարինում
 Նորը
 Այլ

Ծրագրի հիմնավորումը : Բարելավել ներհամայնքային տրանսպորտային կապը:

Ծրագրի նպատակը (նպատակները): Թումանյան համայնքի տարածքում ընդգրկված բնակավայրերի միջև չի գործում ոչ մի տեսակի տրանսպորտային կապ: Համայնքում անհրաժեշտ է կառուցել ժամանակակից կահավորված կանգառներ լուսավորության համակարգով և ձեռք բերել բարձր անցանելիությամբ մարդատար տրանսպորտ:

Ծրագրի խնդիրները:

1. Ձեռք բերել 2 հատ բարձր անցանելիությամբ տրանսպորտ
2. Կառուցել 7 հատ կահավորված կանգառներ լուսավորության համակարգով

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Նախապատրաստական աշխատանքներ/նախահաշիվներ ի կազմում/								x				
2.	Գումների գործընթացի կազմակերպում,								x	x			
3.	Աշխատանքների իրականացում									x	x		
4.	Ծրագրի արդյունավետության գնահատում. հաշվետվության կազմում եւ հրապարակում											x	

Ծրագրի ակնկալվող արդյունքները

1. Կբարելավվի ներհամայնքային տրանսպորտային կապը բնակավայրերի և համայնքային կենտրոնի միջև:
2. Կընդլայնվի նախադպրոցական, արտադպրոցական, սպորտային և մշակութային կրթության ներգրավվածությունը:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)	18000,0				18000,0
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	18000,0				18000,0
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ					
	-Շենքերի և շինությունների ծեղք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում	3600,0				3600,0
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում					
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աձեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանակալիության ռազմավարական պաշար					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՉՈՒՐԾԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ՉԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	18000,0				18000,0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ	3600,0				3600,0
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ Այլ պետությունների ՏԻՄ-երից Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ Պետական բյուջեից նպատակային հատկացումներ ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ, դոնոր կազմակերպություններ	14400,0				14400,0

Հ/հ	Ծրագրի ազդեցությունը վարչական բյուջեի վրա	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
1.	Վարչական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
2.	Վարչական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
	Հաշվեկշիռ (եկամուտներ – ծախսեր)	-	-	-	-	-

Ոլորտային կապիտալ ծրագիր - 4

Դպրոցի 2-րդ մասնաշենքի կապիտալ նորոգում,

գույքի ձեռք բերում

(Ծրագրի անվանումը)

Թումանյանի համայնքապետարան

(Ծրագրի իրականացման համար համայնքի պատասխանատու ստորաբաժանումը)

Գումարը 120000000 դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ

Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում Նորը Այլ

Ծրագրի հիմնավորումը: Թումանյան քաղաքի միջնակարգ դպրոցի շենքը կառուցվել է 1974 թվականին: Դպրոցի 2-րդ մասնաշենքը / հիմնական ուսումնական շենքը/ երկար տարիների օգտագործումից հետո դարձել է շահագործման ոչ պիտանի՝ պատերի սավառը տեղ-տեղ քանդվել է, պատերի գույնը խամրել է, սանհանգույցը չի գործում, պատուհաններին ապակիներ չկան, դասարանների դռները և պատուհանները ենթակա է փոխարինման:

2015թ. մասնակի վերանորոգվել են սանհանգույցները:

Ծրագրի նպատակը (նպատակները): Ծրագրի իրականացման արդյունքում դպրոցի 2-րդ մասնաշենքը կստանա

ժամանակակից տեսք և կապահովվի համապատասխան գույքով:

Ծրագրի խնդիրները:

1. Ազբոթերթե տանիքը կփոխարինվի ցինկապատ թիթեղով
2. Փայտե դռները և պատուհանները կփոխարինվի մետաղալաստե դռներով և պատուհաններով
3. Ամբողջովին կվերանորոգվի լսարանները, միջանցքները և սանհանգույցները
4. Ձեռք կբերվի ժամանակակից գույք

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	Ամիսներ 2016թ.												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1.	Ձեռք բերել ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ծրագիրը 2017թ. Պետական բյուջեի նախագծում ընդգրկելու համար										X	x		
		Ամիսներ 2017թ.												
1.	Մարգպետարանի հետ քննարկել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը		X	X	X									
2.	Դպրոցի վերանորոգման շինարարության կազմակերպության ընտրության մրցույթը			X	X									
3.	Աշխատանքների իրականացում				X	X	X	X	X					
4.	Ծրագրի արդյունավետության գնահատում, հաշվետվության կազմում եւ հրապարակում													

Ծրագրի ակնկալվող արդյունքները

1. Համայնքի դպրոցահասակ երեխաները ուսումը կշարունակեն վերանորոգված լուսավոր և հագեցած ժամանակակից գույքով լսարաններում:

Ծրագրի բյուջեն

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱՆՍԵՐ (Ա+Բ)		120000.0			
Ա.	ԸՆԹԱՑԻԿ ԾԱՆՍԵՐ					
Բ.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱՆՍԵՐ					
1.	ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
1.1	Շենքեր և շինություններ		120000.0			
	-Շենքերի և շինությունների ձեռք բերում					
	-Շենքերի և շինությունների կառուցում					
	-Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում		120000.0			
1.2	Մեքենաներ և սարքավորումներ					
	-Տրանսպորտային սարքավորումներ					
	-Վարչական սարքավորումներ					
	-Այլ մեքենաներ և սարքավորումներ					
1.3	Այլ հիմնական միջոցներ					
	-Աճեցվող ակտիվներ					
	-Ոչ նյութական հիմնական միջոցներ					
	-Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր					
	-Նախագծահետազոտական ծախսեր					
2.	ՊԱՇԱՐՆԵՐ					
	-Համայնքային նշանակալիության ռազմավարական պաշար					
	-Նյութեր և պարագաներ					
	-Վերավաճառքի համար նախատեսված ապրանքներ					
	-Սպառման նպատակով պահվող պաշարներ					
3.	ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ԱԿՏԻՎՆԵՐ					
4.	ԶԱՐՏԱԴՐՎԱԾ ԱԿՏԻՎՆԵՐ					
	-Հող					
	-Ընդերքային ակտիվներ					
	-Այլ բնական ծագում ունեցող ակտիվներ					
	-Ոչ նյութական չարտադրված ակտիվներ					

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		120000.0			120000.0
1.	Ֆոնդային բյուջեի սեփական եկամուտներ					
2.	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ Այլ պետությունների ՏԻՄ-երից Միջազգային կազմակերպություններից					
3.	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ Պետական բյուջեից նպատակային հատկացումներ ՀՀ այլ համայնքներից պաշտոնական դրամաշնորհներ		120000.0			120000.0
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ, դոնոր կազմակերպություններ					

Հ/հ	Ծրագրի ազդեցությունը վարչական բյուջեի վրա	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
1.	Վարչական բյուջեի եկամուտներ	-	-	-	-	-
2.	Վարչական բյուջեի ծախսեր	-	-	-	-	-
	Հաշվեկշիռ (եկամուտներ -- ծախսեր)	-	-	-	-	-

Ոլորտային կապիտալ ծրագիր – 5

Քարինջ գյուղի կենտրոնի կառուցում

(Ծրագրի անվանումը)

Թումանյանի համայնքապետարան

(Ծրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Ծրագրի ընդհանուր արժեքը՝ 20,000.0 հազար դրամ

Ծրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում
 Սպասարկում
 Ընթացիկ աշխատանքներ
 Վերանորոգում
 Վերականգնում
 Ընդլայնում
 Փոխարինում
 Նորը
 Այլ

Ծրագրի հիմնավորումը

Քարինջ գյուղի յիստոր ներկայացուցիչի նստավայրը, գրադարանը, բուժկետը և «Հայփոստի» բաժանմունքը՝ չունենալով առանձին շենքեր, ժամանակավորապես տեղակայված են գյուղի մանկապարտեզի շենքում, որի պայմանները չեն համապատասխանում նշված հիմնարկների գործունեության բնույթին և պահանջներին: Համայնքում չկա նաև մշակույթի տուն, որի պատճառով բնակչության մշակութային կյանքը, կարելի է ասել, սառեցված վիճակում է: Գյուղում անհրաժեշտ է վերանորոգել 1990թ. կառուցված և անավարտ մնացած մանկապարտեզի շենքը, որտեղ հնարավոր կլինի տեղափոխել վերոնշյալ հիմնարկները, ինչպես նաև ստեղծել մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ, կազմակերպել և անցկացնել հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ:

Ծրագրի նպատակները

Բարձրացնել համայնքի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը, ակտիվացնել համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը, աշխուժացնել համայնքի հասարակական և մշակութային կյանքը:

Ծրագրի խնդիրները

- Ձեռք բերել ՀՀ Լոռու մարզպետարանի միջնորդությունը և ՀՀ կառավարության համաձայնությունը՝ ծրագիրը ներառելու ՀՀ 2017թ. պետական բյուջեի նախագծում:
- Համայնքի կողմից պատվիրել և ստանալ համայնքային նոր կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:
- ՀՀ քաղաքաշինության նախարարության կողմից կազմակերպել մրցույթ՝ գյուղի կենտրոնի վերանորոգման շինարարական կազմակերպությունն ընտրելու համար:
- Վերահսկել կենտրոնի վերանորոգման աշխատանքները:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2018թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Ծրագիրը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարանի քննարկմանը և հավանությանը					x	x						
2.	Ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարանի միջնորդությունը ՀՀ տարածքային կառավարման և ՀՀ ֆինանսների նախարարություններ ծրագիրը ՀՀ 2015թ. պետական բյուջեի նախագծում ներառելու համար								x	x			
3.	Ձեռք բերել ՀՀ կառավարության համաձայնությունը ծրագիրը ՀՀ 2018թ. պետական բյուջեի նախագծում ներառելու և ՀՀ ԱԾ ներկայացնելու համար										x	x	

4.	ՀՀ պետական բյուջեի քննարկումից և հաստատումից հետո պատվիրել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը՝ որպես համայնքի կողմից ներդրում												X	X
----	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	--	---	---

Հ/հ	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2019թ., Ամիսներ												
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	
1.	Կազմել, քննարկել և հաստատել ծրագրի նախագծա-նախահաշվային փաստաթղթերը	X	X	X										
2.	Օժանդակել Լոռու մարզպետարանին՝ կազմակերպելու և անցկացնելու մանկապարտեզի վերանորոգման շինարարական կազմակերպության ընտրության մրցույթը			X	X									
3.	Վերահսկել մանկապարտեզի վերանորոգման շինարարական աշխատանքները				X	X	X	X	X	X				

Ծրագրի ակնկալվող արդյունքները

- գյուղում կվերանորոգվի կոր անավարտ մանկապարտեզի շենքը, որտեղ հնարավոր կլինի տեղափոխել գյուղի վարչական ներկայացուցչի նստավայրը և գրադարանը և <Հայփոստի> բաժանմունքը,
- շենքում կստեղծվեն և կգործեն մշակութային տարբեր խմբեր ու խմբակներ՝ երեխաների, երիտասարդների և մեծահասակների ներգրավմամբ,
- շենքում կկազմակերպվեն և կանցկացվեն հասարակական և մշակութային տարբեր բնույթի հանրային ծառայություններ ու միջոցառումներ,
- կբարձրանա գյուղի բնակչությանը հանրային ծառայությունների մատուցման մակարդակը,
- կբարելավվի գյուղի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը,
- կաշխուժանա գյուղի հասարակական և մշակութային կյանքը:

Կապը այլ ծրագրերի հետ

մանկապարտեզի շենքի վերանորոգման ծրագիրն անմիջական կապի մեջ է գտնվում գյուղի մանկապարտեզի պայմանների ընդլայնման և բարելավման ծրագրի հետ: Մանկապարտեզի վերանորոգումից հետո այդտեղ կտեղափոխվեն վարչական ներկայացուցչի նստավայրը, գրադարանը և <Հայփոստի> բաժանմունքը, հնարավորություն կստեղծվի իրականացնելու գյուղի մանկապարտեզի ընդլայնման և բարելավման ծրագիրն ավելի մեծ տարածքում՝ ներգրավելով ավելի շատ թվով երեխաների:

Ծրագրի բյուջեն

ա/ ծրագրի կյանուսները

Հ/հ	Ծրագրի ֆինանսավորման աղբյուրները	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԵԿԱՍՈՒՏՆԵՐ				20000.0	20000.0
1.	Համայնքի բյուջեի սեփական մուտքեր				1000.0	1000.0
	- Վարչական բյուջե					
	- Տնտեսային բյուջե				1000.0	1000.0
2.	Արտաքին պաշտոնական դրամաշնորհներ					
	- Այլ պետությունների համայնքներից					
	- Միջազգային կազմակերպություններից					
3.	Ներքին պաշտոնական դրամաշնորհներ				19000.0	19000.0
	- Պետական բյուջեից դոտացիաներ				19000.0	19000.0
	- Պետական բյուջեից նպատակային հատկացումներ					
	- ՀՀ այլ համայնքներից պաշտոն. դրամաշնորհներ					
4.	Պետական բյուջեից վարկ					
5.	Առևտրային բանկից վարկ					
6.	Համայնքային արժեթղթերի թողարկումից					
7.	Մասնավոր (բիզնես) հատվածի ներդրումներ					
8.	Բնակչության ներդրումներ					
9.	Այլ					

բ/ ծրագրի ծախսերն՝ ըստ ծախսերի գործառնական դասակարգման

Հ/հ	Ծրագրի ծախսերը	Կանխատեսվող ժամանակահատվածը				
		2016	2017	2018	2019	Ընդամենը
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾՐԱԳՐԻ ԾԱԽՍԵՐ (Ա+Բ)				20000.0	20000.0
Ա.	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ					
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
2.	Պաշտպանություն					
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն					
4.	Տնտեսական հարաբերություններ					
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն					
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն					
7.	Առողջապահություն					
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն					
9.	Կրթություն					
10.	Սոցիալական պաշտպանություն					
11.	Հիմն. բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր					
Բ.	ՖՈՆԴԱՑԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ				20000.0	20000.0
1.	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ					
2.	Պաշտպանություն					
3.	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն					
4.	Տնտեսական հարաբերություններ				20000.0	20000.0
5.	Շրջակա միջավայրի պաշտպանություն					
6.	Բնակարանային շինարարություն և կոմունալ տնտեսություն					
7.	Առողջապահություն					
8.	Հանգիստ, մշակույթ և կրոն					
9.	Կրթություն					
10.	Սոցիալական պաշտպանություն					
11.	Հիմն. բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր					

Ոլորտային կապիտալ ծրագիր - 6

Համայնքի մանկապարտեզների պայմանների ընդլայնում և բարելավում

(Շրագրի անվանումը)

Քարինջ և Լորուս գյուղերի մանկապարտեզ

(Շրագրի հայտը ներկայացնող կազմակերպությունը, ստորաբաժանումը կամ խումբը)

Շրագրի ընդհանուր արժեքը՝ 6,500.0 հազար դրամ

Շրագրի տեսակը կամ գնվող ապրանքը

- Ծառայությունների մատուցում Սպասարկում Ընթացիկ աշխատանքներ Գույքի ձեռքբերում
 Վերանորոգում Վերականգնում Ընդլայնում Փոխարինում Նորը Այլ

Շրագրի հիմնավորումը

Քարինջ և Լորուս գյուղերում գործում է նախադպրոցական ուսումնական հաստատությունները՝ մանկապարտեզները, որտեղ ներկայում հաճախում են 35 երեխաներ 1 խումբ Քարինջ գյուղում և 1 խումբ Լորուս գյուղում: Գյուղերի մանկապարտեզների շենքերը հիմնականում վերանորոգված են, միայն կարիք է զգացվում պատուհանների փոխարինման, ընդլայնման: Այն ներկայում բավարար վիճակում են, ապահովված են ջրամատակարարմամբ, գույքով, երեխաներին անհրաժեշտ պարագաներով, խաղալիքներով: Մանկապարտեզների գործարկման հարցում սերտ համագործակցում է «Վորլդ Վիժն - Հայաստան» կազմակերպության Ալավերդու SՁԾ-ի և «Ալվան ծաղիկ» բարեգործական կազմակերպության և բարերարների հետ:

Քարինջ գյուղի մանկապարտեզը ներկայում գործում է 5-ժամյա աշխատակարգով, երեխաներին տաք սնունդ չի տրվում, երեխաները մանկապարտեզում չեն քնում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ մանկապարտեզի շենքում են տեղակայված նաև համայնքի գյուղապետարանը, գրադարանը, բուժկետը և <Հայփոստի> բաժանմունքը: Մանկապարտեզի պայմանները հնարավոր է ընդլայնել միայն համայնքային նոր կենտրոնի շենքի կառուցման դեպքում, ուր կարելի կլինի տեղափոխել գյուղապետարանը, գրադարանը և <Հայփոստի> բաժանմունքը:

Շրագրի նպատակները

- Ընդլայնել համայնքի մանկապարտեզների պայմանները՝ ավելացնելով երեխաների թիվը մինչև 70-ի, անցնելով 8-ժամյա աշխատակարգի և երեխաներին ապահովելով տաք սնունդով:
- Բարելավել երեխաների նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության մատուցման պայմանները:

Շրագրի խնդիրները

1. Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը (ծրագրի արժեքի համապատասխանաբար 75% և 25% համամասնությամբ):
2. Նոր անավարտ մանկապարտեզի վերանորոգումից և շահագործումից հետո Քարինջ գյուղի մանկապարտեզի շենքից նոր շենք տեղափոխել գյուղի վարչական ներկայացուցիչի նստավայրը, գրադարանը և <Հայփոստի> բաժանմունքը, իսկ բուժկետը թողնել մանկապարտեզի շենքում:
3. Փոխարինել մանկապարտեզների պատուհանները և դռները նորով
4. Քարինջ գյուղի մանկապարտեզի շենքի ազատված և Լորուս գյուղի չօգտագործվող շենքային տարածքներում իրականացնել ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ:
5. Մանկապարտեզների 35 երեխայի համար ձեռք բերել անկողնային պարագաներ, այլ անհրաժեշտ գույք:
6. Մանկապարտեզներում ստեղծել խոհանոցային նոր պայմաններ 70 երեխայի ապահովելու տաք սնունդով:
7. Մանկապարտեզների դաստիարակներին գործուղել վերապատրաստման դասընթացի Վանաձոր քաղաքում, յուրացնելու նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության մատուցման նորագույն մեթոդները և ձևերը:

Ծրագրի իրականացման ժամանակացույցը

2/ h	Ծրագրի իրականացման քայլերը / գործողությունները	2017թ., Ամիսներ											
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Ձեռք բերել որևէ դոնոր կազմակերպության համաձայնությունը՝ համայնքի հետ համատեղ համաֆինանսավորելու ծրագիրը	x	x	x	x								
2.	Մանկապարտեզի շենքից նոր շենք տեղափոխել գյուղապետարանը, գրադարանը և <Հայփոստի> բաժանմունքը				x	x							
3.	Փոխարինել մանկապարտեզների պատուհանները և դռները նորով					x	x						
4.	Մանկապարտեզների շենքի ընդլայնված տարածքներում իրականացնել ընթացիկ նորոգման և ներքին հարդարման աշխատանքներ						x	x	x				
5.	Մանկապարտեզի 35 երեխայի համար ձեռք բերել անկողնային պարագաներ, այլ անհրաժեշտ գույք								x	x			
6.	Մանկապարտեզներում ստեղծել խոհանոցային նոր պայմաններ՝ 35 երեխայի ապահովելու տաք սնունդով								x	x			
7.	Մանկապարտեզների դաստիարակներին գործուղել վերապատրաստման դասընթացի՝ Վանաձոր քաղաքում									x			
8.	2018թ. ընդլայնված մանկապարտեզների շահագործման, նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության մատուցման համար 30 նոր երեխաների հավաքագրում և ընդունում մանկապարտեզ										x	x	x

Ծրագրի ակնկալվող արդյունքները

- 2018թ. տարեվերջին համայնքում շահագործման պատրաստ կլինի շենքային և խոհանոցային ընդլայնված պայմաններով մանկապարտեզներ, որտեղ ներկայիս 35 երեխայի փոխարեն 2019թ.-ին կհաճախեն համայնքի նախադպրոցական տարիքի 70 երեխա,
